ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 09/07

ՀՀ, ք. Երևան 02 սեպտեմբերի 2025թ.

«ՈՐԱԿԻ-ՆՇԱՆ» ՍՊ ընկերությունն, ի դեմս ընկերության տնօրեն՝ Վահե Հարությունյանի (ՀՎՀՀ՝ 02822795, հասցե՝ ք. Երևան, Գ. Քոչարի փ. 21), որը գործում է կանոնադրության համաձայն, այսուհետ **«Կատարող»**

և

Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար ՝ Արայիկ Ներսիսյանի (ՀՎՀՀ՝ 06954163 , հասցե՝ ՀՀ,Լոռի մարզ,գ.Լոռի Բերդ,Աշոտ Երկաթի 7), որը գործում է կանոնադրության համաձայն, այսուհետ **«Պատվիրատու»**, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ **Կատարողը** պարտավորվում է **Պատվիրատուի** հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ **Պատվիրատուն** պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է իրականացնել՝

1.2.1. Սույն թվականի սեպտեմբերի 15-18-ը Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ քաղաքում կայանալիք «INTERNATIONAL QUALITY MARK DUBAI 2025» մրցանակաբաշխության մասնակցության ապահովում և կազմակերպում.

1.2.2. Երևան-Դուբայ-Երևան ավիատոմս /1 անձ/ և տրանսֆեր.

1.2.3. Կեցություն Դուբայում /Park Hyatt Dubai / հյուրանոցում՝ 3 գիշեր 4 օր /1 անձ/ երկտեղանի սենյակ, ներառյալ՝ նախաճաշ /

1.2.4.«INTERNATIONAL QUALITY MARK DUBAI 2025» մրցանակի և հավաստագրի՝ <<ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԻ ՆՇԱՆ ԴՈՒԲԱՅ 2025>> տրամադրում՝ Դուբայում կայալանալիք միջոցառման շրջանակներում.

1.2.5. Համայնքի մասին տեսաֆիլմի նկարահանում.

1.2.6. Միջոցառման ցուցադրում հայաստանյան առաջատար հեռուստաընկերություններից մեկի եթերում՝/ «Արմենիա» կամ «Շանթ» հեռուստաընկերություններ.

1.2.7. Միջոցառման լուսաբանում՝ տեղեկատվական առաջատար 15 կայքերում.

1.2.8. Պրոտոկոլի տրամադրում.

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. **Կատարողը պարտավոր է՝**

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում,

2.1.3. Պատվիրատուի պահանջով 5 աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել Պատվիրատուի կողմից հայտնաբերված թերությունները.

2.2 **Կատարողն իրավունք ունի՝**

2.2.1. Կատարողն իրավունք ունի իր մատուցած ծառայությունների համար պահանջել 3.1 կետում նշված գումարը

2.2.2. Չմատուցել 1.2.-ում նշված ծառայությունները, եթե **Պատվիրատուն** չի վճարել 3.1-ում նշցած գումարը սույն Պայմանագրին համապատասխան.

2.3. **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.3.1. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների համար վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնի եւ ժամկետներին համապատասխան:

2.3. **Պատվիրատուն իրավունք ունի ՝**

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.4. Կողմերը պարտավորվում են ապահովել Պայմանագրի կատարման ընթացքում իրենց տրամադրված գաղտնի տեղեկատվության խիստ գաղտնիությունը, չբացահայտել, հասանելի չդարձնել այն որևէ այլ անձանց:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրով մատուցվող Ծառայությունների արժեքը կազմում է 1 975 000(մեկ միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկեր):

3.2 Ծառայությունների դիմաց **Պատվիրատուն** պայմանագրի կնքման ամսաթվից սկսած 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարում է կանխավճար սույն պայմանագրի 3.1 կետում ամրագրված գումարի 100 (հարյուր տոկոսի) տոկոսի չափով:

4. Անհաղթահարելի Ուժի Ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Կողմերը կարող են ազատվել պատասխանատվությունից անհաղթահարելի ուժերի ազդեցության ծագման դեպքում:

4.2. Անհաղթահարելի ուժերի ազդեցությունները, որոնք վեր են Կողմերի կամքից, և որոնք չէին կարող կանխվել կամ հաղթահարվել բարեխղճորեն գործող Կողմի կողմից, դրանք կհամարվեն այնպիսի հանգամանքներ, որոնք կազատեն Կողմին պատասխանատվությունից, այն պարագայում, եթե դրանք առաջացել են Պայմանագիրը կնքելուց հետո և որոնք մասնակիորեն կամ ամբողջությամբ խանգարում են Պայմանագրի կատարմանը:

4.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության վերաբերյալ պատկերացումը ներառում է արտաքին միջոցառումներ և արտակարգ իրավիճակներ, որոնք գոյություն չեն ունեցել Պայմանագրի կնքման պահին և որոնք տեղի են ունեցել անկախ Կողմերի կամքից, որի ազդեցությունը Կողմերը չէին կարող կանխել այն միջոցներով կամ եղանակներով, որոնք կարող էին սպասվել այն Կողմից, որի մոտ առաջացել է անհաղթահարելի ուժի ազդեցությունը:

4.4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ներառում է՝ պատերազմ և ռազմական գործողություններ, ապստամբություն, զորահավաք, գործադուլ ձեռնարկությունում, համաճարակ, հրդեհ, պայթյուն, ճանապարհատրանսպորտային պատահարներ և բնական աղետներ, իշխանությունների գործողություններ, ինչպես նաև մնացած այլ հանգամանքները, որոնք ազդում են պարտականությունների կատարման վրա, և որոնք իրավասու դատարանը կհամարի և կհայտարարի անհաղթահարելի ուժի ազդեցություն:

4.5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունից տուժած Կողմը պետք է անմիջապես տեղեկացնի մյուս Կողմին տվյալ պատահարի և անհաղթահարելի ուժի, հավանական ընթացքի և այլ հանգամանքների մասին, որոնք կանխում են պայմանագրային պարտականությունների կատարումը: Եթե տուժած Կողմը ժամանակին չի տեղեկացնում մյուս Կողմին անհաղթահարելի ուժի ազդեցության առկայության մասին, ապա այդ Կողմը չի կարող հղում անել անհաղթահարելի ուժերի ազդեցությանը, բացառությամբ, եթե այդպիսի անհաղթահարելի ուժերը կանխում են ծանուցում ուղարկելը:

4.6. Անհաղթահարելի ուժի ազդեցության և այլ հանգամանքների գործողության ընթացքում, որոնց հիման վրա Կողմը ազատվել է պարտականությունների կատարումից, պարտականությունների կատարումը կասեցվում է, և պայմանագրային պարտականությունները ժամանակին չկատարելու համար ոչ մի տեսակի տուգանքներ չեն կիրառվում:

5. Վեճերի լուծման կարգը

5.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

5.2 Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

6. Պայմանագրի դադարեցումը և փոփոխությունները

6.1 Պայմանագրի դադարեցմն դեպքում **Պատվիրատուն** պարտավորվում է **Կատարողին** գրավոր ծանուցել առնվազն 30 (երեսուն) օր առաջ՝ հատուցելով Կատարողին սույն

պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման հետ կապված նրա փաստացի կատարած ծախսերի գումարը:

6.2. Սույն Պայմանագրի 6.1 կետի խախտմամբ **Պատվիրատուի** կողմից Պայմանագիրը դադարեցնելու դեպքում, **Կատարողն** իրավունք ունի չվերադարձնել **Պատվիրատուին** արդեն իսկ վճարված կանխավճարը:

6.3. **Պատվիրատուի** պահանջով, հյուրանոցի կամ ավիատոմսի կարգի փոփոխության դեպքում, կատարվում է արժեքի վերահաշվարկ, որն էլ սահմանվում է պայմանագրի անբաժենի մաս հանդիսացող հավելվածում, որը պետք է կնքվի և ստորագրվի երկու կողմերի կողմից:

7. Եզրափակիչ դրութեր

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի կողմից պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է միայն այն պայմանով, եթե դա կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները պայմանագրի անբաժանելի մասն են կազմում:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՈՐԱԿԻ-ՆՇԱՆ» ՍՊԸ	«ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆ»
ՀՎՀՀ- 02822795	ՀՎՀՀ- 06954163
Հասցե՝ ք. Երևան, Գ. Քոչարի փ. 21	Հասցե՝ ՀՀ,Լոռի մարզ,գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Բանկ ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ	Բանկ՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 1570063762610100	Հ/Հ՝ 900252144028
Տնօրեն _____ Վ. Հարությունյան (ստորագրություն)	Համայնքապետ _____ Ա. Ներսիսյան (ստորագրություն)